

Կ Ա Ր Մ Ի Ք

Արման Արսենի Բաբախանյանի «Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»

վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ՝ ԺԲ.00.05- «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Երևանի պետական համալսարանում գործող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի որոշմամբ կարծիքի ներկայացված Արման Արսենի Բաբախանյանի *«Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»* վերտառությամբ ԺԲ.00.05- «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է գիտագործնական արժեք ունեցող այնպիսի հարցադրումների համակողմանի ուսումնասիրությանը, ինչպիսիք են՝ քրեական ենթամշակույթի տարածման միտումները Հայաստանի Հանրապետությունում, քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերը և դրանց բնութագրող հատկանիշները և դրանց հետ կապված այլ հարցադրումներ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը հիմնականում փաստարկված է այն հանգամանքով, որ ՀՀ քրեական օրենսդրությունում քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերը նախատեսելուց հետո քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարը դեռևս չի կարող համարվել հաջողված, ինչի պատճառ է նաև քրեական օրենսդրության անկատարությունը: Քրեական օրենսդրության անկատարությունը ոչ միայն հանգեցնում է քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության անկման, այլ նաև հեղինակազրկում է օրենքը և իրավակիրառ մարմիններին:

Հեղինակին հաջողվել է ուսումնասիրության նյութ դարձնել ընտրված թեմային անմիջականորեն առնչվող հարցադրումները, իսկ թեմայի արդիականությունը պայմանավորված է ընտրված հարցերի հրատապությամբ և դրանց գիտագործնական նշանակությամբ:

Հեղինակի կողմից իրականացված ուսումնասիրության առանցքն են կազմել քրեական ենթամշակույթի տարածման միտումները Հայաստանի Հանրապետությունում, քրեական ենթամշակույթը բնութագրող եզրույթների օրենսդրական ամրագրման հարցը, քրեական օրենսգրքի ընդհանուր մասում քրեական ենթամշակույթին առնչվող իրավակարգավորումների նախատեսման հիմնախնդիրը, քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմեր նախատեսելու անհրաժեշտությունը, քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, դրանց որակյալ հատկանիշները, հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու դեպքում քրեական ենթամշակույթին առնչվող հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրը:

Հեղինակն օգտվել է հայրենական և արտասահմանյան մեծաքանակ տեսական աղբյուրներից և իրավական ակտերից, որոնք էլ ավելի են հարստացրել ատենախոսության բովանդակությունը:

Պաշտպանության ներկայացվող եզրահանգումներն ու դրույթներն ունեն բավարար գիտական հիմնավորվածություն և կարող են էսկան նշանակություն ունենալ քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի շրջանակում ձևավորված մոտեցումների զարգացման, այնպես էլ վերաբերելի մասով ՀՀ քրեական օրենսդրության կատարելագործման տեսանկյունից:

Վերոգրյալի հաշվառմամբ, պետք է արձանագրել, որ ատենախոսությունն աչքի է ընկնում շարադրանքի հստակությամբ, դրա բովանդակությունն արտացոլող դրույթների միջև գոյություն ունեցող տրամաբանական հաջորդականությամբ, ինչպես նաև Հեղինակի ինքնատիպ և արժեքավոր դատողություններով: Ընդ որում, ատենախոսությունը շարադրված է պատշաճ գրական հայերենով, աչքի է ընկնում նաև ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ: Հեղինակի կողմից պահպանվել են նաև աշխատանքի ձևավորման պահանջները:

Ընդհանուր առմամբ, Հեղինակին հաջողվել է ապահովել աստենախոսության մեջ շարադրված պաշտպանությանը ներկայացվող դրույթների միջև ներքին համակարգային կապը:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ աշխատանքը գերծ չէ նաև որոշակի նկատառումներից, որոնք են.

1. Պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթում Հեղինակն եզրահանգել է, որ օրենսդրական մակարդակում գողական խոսվածքի՝ գողական աշխարհում կիրառվող եզրույթների օգտագործումը թույլատրելի է միայն որպես վերջին՝ բացառիկ միջոցը (ultima ratio), երբ գրական խոսքում առկա չեն քրեական ենթամշակույթին վերաբերող երևույթների և կարգավիճակների էությունը նույնությամբ արտահայտող եզրույթներ և միայն այն դեպքում, երբ այդ եզրույթները մարդու պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող բնույթ չունեն: Մինչդեռ, մեր գնահատմամբ, ցանկացած պարագայում օրենսդիրը չպետք է օրենսդրական մակարդակում օգտագործի գողական խոսվածքից եզրույթներ, օրենսդրական մակարդակում ճանաչի «գողական ավանդույթները և տիտղոսները»՝ կանխելու համար հետագայում հանցավոր տարբեր խմբավորումների խոսվածքների ներթափանցումն օրենսդրության մեջ:

2. Աստենախոսության երկրորդ գլխի առաջին պարագրաֆում Հեղինակն առաջարկել է ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն նախատեսել գողական աշխարհի անդամին, գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձին կամ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձին դիմելու համար (եջ 118): Կարծում ենք, որ բացակայում է գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձին դիմելը նախատեսելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով, որ վերջիններս «միջանկյալ օղակ» են գողական աշխարհի անդամի, քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձի և նրանց դիմող անձանց միջև և փաստացի գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձին դիմելու դեպքում «դիմումը» իրականում ուղղված է ոչ թե նրան, այլ գողական աշխարհի անդամին, քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձին, ինչն էլ արդեն իսկ քրեականացված է:

3. Պաշտպանությանը ներկայացված երրորդ կետում հեղինակն առաջարկել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհ) նոր հասկացությունը՝ առանձնացնելով ի թիվս այլնի հանցագործություններ կատարելու նպատակը: Ընդհանուր առմամբ համաձայնվելով հեղինակի առաջարկության հետ, հարց է առաջանում, թե արդյոք քրեական ենթամշակույթ կրող անձի կողմից այդպիսի կարգավիճակ ունեցող մեկ այլ անձի նկատմամբ, օրինակ՝ անձնական հողի վրա բռնություն կատարելը, ենթակա է որակման քննարկվող հանցակազմերով: Այսպես, մեկ քրեական գործով քրեական ենթամշակույթ ունեցող երկու անձ միմյանց անձնական շարժառիթներով ծեծի էին ենթարկել: Վերջիններիս արարքը որակված է եղել ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածով: Մինչդեռ, ստորադաս դատարանները կայացրել էին արդարացման վերդիկտ՝ պատճառաբանելով, որ նման դեպքերում արարքը պետք է որակվեր որպես անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն: Վճռաբեկ դատարանի քրեական պալատը դատախազի բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է:

4. Դրական գնահատելով Հեղինակի կողմից հետազոտության ընթացքում իրավաբանական համայնքի ներկայացուցիչների շրջանակում հարցում անցկացնելը, որի արդյունքներն ամփոփված են աշխատանքի 2-րդ հավելվածում՝ կարծում ենք, որ աշխատանքն էապես կշահեր, եթե հարցմանը ներգրավված լինեին առավել մեծ թվով պրակտիկ իրավաբաններ (դատավորներ, դատախազներ, քննիչներ, փաստաբաններ):

Հիշյալ նկատառումները կրում են մասնավոր բնույթ և ամենևին չեն ստվերում աշխատանքում արված վերլուծությունների և եզրահանգումների գիտական արժեքը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ կարծիքի ներկայացված ատենախոսությունը, ինչպես նաև սեղմագիրը, բավարարում են համանման աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են Հեղինակի 10 հրապարակած գիտական հոդվածներում:

Այսպիսով, ամփոփելով Արման Արսենի Բաբախանյանի «Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ԺԲ.00.05- «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ատենախոսության արդյունքները, գտնում եմ, որ ներկայացված աշխատանքը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ, 7-րդ, 10-րդ և 13-րդ կետերին, ուստի Արման Բաբախանյանն արժանի է հայցվող մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր,

իրավաբանական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր, Հայ-Ռուսական համալսարանի պրոֆեսոր

Սերժիկ Սերգեյի Ավետիսյան

6 դեկտեմբերի 2025 թվական

ք. Երևան

Պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերժիկ Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Հայ-Ռուսական համալսարանի գիտական խորհրդի քարտուղար,
Բոգդա Սերգեյի Կասաբաբովա

Բ.Գ.Թ., դոցենտ



6 դեկտեմբերի 2025 թվական